


Պահանջ իրավապահներին. բացահայտել #Քայլարա ակցիաները լուսաբանող լրագրողների նկատմամբ կիրառած բռնության դեպքերը

Ապրիլ 20, 2018

Պահանջ իրավապահներին. բացահայտել #Քայլարա ակցիաները լուսաբանող լրագրողների նկատմամբ կիրառած բռնության դեպքերը

 [MHM0120767.jpg](#) [1]

Ապրիլի 19-ին մի շարք լրագրողական հասարակական կազմակերպություններ հայտարարություն են տարածել վերջին մեկ շաբաթվա ընթացքում Երևանում ընթացող բողոքի ակցիաների ժամանակ տուժած լրագրողների վերաբերյալ, պահանջելով իրավապահ մարմիններից՝ օպերատիվ կերպով բացահայտել և պատասխանատվության ենթարկել լրագրողների նկատմամբ հարձակումներ իրագործած անձանց:

Հայտարարության մեջ մասնավորապես նշվում է.

«Վերջին մեկ շաբաթվա ընթացքում Երևանում ընթացող բողոքի ակցիաների և դրանց հակազդելու իշխանությունների գործողությունների ժամանակ հարձակման թիրախ են դարձել նաև լրագրողներն ու լրատվամիջոցները:

Այսօր՝ ապրիլի 19-ին, ՀՀ կառավարության 3-րդ մասնաշենքի մոտ, քաղաքացիական հագուստով անձինք ծեծի են ենթարկել «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի լրագրող Տիրայր Մուրադյանին: Նրա վկայությամբ՝ հարձակվողները ոստիկաններ էին, որոնք նկատելով, որ հայտնվել են թղթակցի ուշադրության կենտրոնում, բռնություն են կիրառել նրա նկատմամբ:

Երեկ՝ ապրիլի 18-ին, մայրաքաղաքի Բաղրամյան պողոտայում տեղակայված գրահատեխնիկական լուսանկարելու համար փոխօստիկանապետ Հունան Պողոսյանի հրամանով հետապնդման է ենթարկվել «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Նարեկ Կիրակոսյանը:

Ապրիլի 17-ի ուշ երեկոյան Երևանի Մաշտոցի պողոտա - Թումանյան խաչմերուկի մոտակայքում մի խումբ անձինք հարձակվել են տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանող «Factor.am» լրատվական կայքի գլխավոր խմբագիր Արևիկ Սահակյանի և օպերատոր Գևորգ Մարտիրոսյանի վրա, բռնության ենթարկել նրանց:

Ապրիլի 16-ին Բաղրամյան պողոտայում ոստիկանության՝ հատուկ միջոցներ կիրառելու հետևանքով վնասվածքներ են ստացել «168.am» կայքի թղթակցի Անի Քեշիշյանը և «Factor.am»-ի օպերատոր Հովհաննես Սարգսյանը, վնասվել է նաև վերջինիս գործընկեր Վրեժ Մարգարյանի տեսախցիկը և ուղիղ հեռարձակման սարքը:

Ապրիլի 14-ին ցուցարարների մի խումբ՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, ներխուժել է Հանրային ռադիոյի շենք, կոտրել եթերային ստուդիայի դուռը և պահանջել անհապաղ ուղիղ եթեր տրամադրել:

Եթե Հանրային ռադիոյում տեղի ունեցած միջադեպի առնչությամբ հարուցված քրեական գործով արդեն իսկ կա երկու ձեռքարկված, ապա որոշ այլ դեպքերում իրավապահները հապաղում են՝ նույնիսկ երբ լուսանկարների ու տեսանյութերի միջոցով բավական հեշտ է պարզել հարձակվողների ինքնությունը: Սա հիմքեր է ստեղծում իրավապահների գործողությունները խտրական որակելու համար:

Հաշվի առնելով լարված հասարակական-քաղաքական իրավիճակը՝ մենք՝ ներքոստորագրյալներս, պահանջում ենք.

-իրավապահ մարմիններից՝ օպերատիվ կերպով բացահայտել և պատասխանատվության ենթարկել լրագրողների նկատմամբ հարձակումներ իրագործած, նրանց մասնագիտական գործունեությունը խոչընդոտած անձանց,

-ՀՀ ոստիկանությունից և նրա հովանու ներքո գործող քաղաքացիական հագուստով անձանցից՝ հանդուրժողականություն և հարգանք ցուցաբերել ՋԼՄ-ների ներկայացուցիչների աշխատանքի նկատմամբ՝ բացառելով լրագրողների և օպերատորների գործունեության անհիմն սահմանափակումները, ինչպես նաև ձեռնպահ մնալ լրատվամիջոցներին հասցեագրված այնպիսի հայտարարություններից, որոնք կարող են էլ ավելի շիկացնել իրավիճակը:

-ՀՀ գլխավոր դատախազությունից՝ պատշաճ կերպով վերահսկել ոստիկանության և քննչական մարմինների գործողությունները:

Լրատվամիջոցների և լրագրողների նկատմամբ հանդուրժողականություն և զսպվածություն ցուցաբերելու կոչ ենք անում նաև «Իմ քայլը» և «Մերժիր Սերժին» նախաձեռնությունների մասնակիցներին և համակիրներին:»

Հայտարարությունը ստորագրել են ստորև նշված ՀԿ-ները.

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե

Երևանի մամուլի ակումբ

Մեդիա նախաձեռնությունների կենտրոն

Լրագրողների «ասպարեզ» ակումբ

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ - հայաստան

Հանրային լրագրության ակումբ

«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ

«Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ

Գորիսի մամուլի ակումբ

Հայաստանի հելսինկյան կոմիտե

«Իրավունքի գերակայություն» ՀԿ

«Իրավունքի ուժ» ՀԿ

Թեմատիկ նյութեր

[Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեք որպես սեփական հայեցողություն. ոչ թե իրավունքի սահմանափակում»](#) [2]

[2012 թվականի ընթացքում ԼՀԱ-ի իրականացրած հետազոտությունները](#) [3]

[ԼՀԱ-ի ծրագրող One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում](#) [4]

[Ditaket.am: Հաշմանդամ աղջկա երազանքն իրականություն դարձավ](#) [5]

[Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն \[6\]](#)

Source URL:

<http://www.jnews.am/demand-to-disclose-cases-of-violence-against-journalists-during-qailara-protests>

Links:

- [1] <http://www.jnews.am/files/MHM0120767.jpg>
- [2] <http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan>
- [3] <http://www.jnews.am/jff-studies-2012>
- [4] <http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award>
- [5] <http://www.jnews.am/mane-asryan>
- [6] <http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek>